Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5

491.542-5
Գ-43

ՕԺԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՀԱՅԵՐԷՆ ՈՒՂԻՂ ԿԱՐԴԱԼ ՈՒՍՈՒՑՇՆԵԼՈՒ

ԿԱԶՄԵՑ՝ Յ. ԳԱՄՊԱՐԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
Էլեֆտուսարդ Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փող. № 5
1906 (157)

14 MAR 2013

491.99-5
9-31
428
53-գ.

ԱԺԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՀԱՅԵՐԷՆ ՈՒՂԻՂ ԿԵՐԳԵԼ ՈՒՍՈՒՑՉՆԵԼՈՒ

ԿԱԶՄԵՑ՝ Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆՑ

1002
9498/1002

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Publicnaya Biblioteka
7/XI 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեֆտրատարմ Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փող. № 5
1906 (157)

Дозволено цензурою. Тифлисъ, 18 Марта 1906 г.

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ներկայումս հայ մանուկներին հայերէն ուղիղ կարդալ սովորեցնելը մեզանում շատ դժուարութիւնների է հանդիպում։ Այդ դժուարութիւնները ծագում են նրանից, որ մեր լեզուի մէջ շատ բառեր այլ են գրւում և այլ կարդացւում։ Գրում ենք՝ պայուսակ, ծառայող, կայարան, սպասել, ստանալ, սկսել, որբ, ողբ, ճրագ, խնդիր, փորձ, յաղթել, արջ։ Կարդում ենք՝ պաիւսակ, կաեարան, ծառայեող, ըստանալ, ըսպասել, ըսկսել, որփ, ախպ, ճրաք, խնթիր, փորց, յախթել, արչ։ Ուսուցիչն այս տեսակ բառերն ուղղում է աշակերտի կարդալու ժամանակ՝ մէկ-մէկ, իւրաքանչիւր բառն առանձին և ուղղած բառերի մէջն էլ ոչ կապ կայ և ոչ էլ հետևողութիւն։ Այս տեսակ թռուցիկ ու պատահական կերպով ուղղելուց աշակերտները շատ քիչ են օգտւում, դրա համար էլ ուղղելը տարիներ է տևում և ուսուցչից երկար ժամանակ ու մեծ աշխատանք պահանջում։ Շարունակ ուղղելն ու կրկնելը, որոնք դեռ միակ միջոցն են աշակերտներին հայերէն ուղիղ կարդալ սովորեցնելու, աշակերտներին՝ բացի ձանձրացնելուց, դասը խանգարելուց, յոգնեցնում ու վհատեցնում են։

Ահա այդ դժուարութիւնները մասամբ թեթևացնելու համար՝ կազմեցի այս «Օժանդակիչ Ձեռնարկը», որի մէջ ժողովել եմ իսկապէս աշակերտներին հասկանալի և սովորական գործ ածուող բառերը. որոնց աշակերտները յաճախ պատահում են մայրենի լեզուի դասագրքերում։ Դիւրութեան համար՝ ամեն մի հնչիւնի վերաբերեալ առանձին վարժութիւններ եմ գրել, իսկ գրքոյկի վերջը դրել եմ այդ բառերի ցուցակը։

Այն ժամանակը, որ ուսուցիչը գործ է դնում

իւրաքանչիւր բառն ուղղելու համար՝ մի քանի դասնուիրելով գրքոյկի ընթերցանութեանը, թէ ինքը կ'աշատուի շարունակ ուղղելուց և թէ աշակերտները կ'աշատուեն շարունակ կրկնելուց։ Բացի դրանից աշակերտները կըվարժուեն ընթերցանութեան մէջ և ուղիղ գրելն էլ, որ սերտ կապուած է ուղիղ կարդալու հետ, բաւական կըհեշտանայ։

Այս «Օժանդակիչ ձեռնարկը» կարելի է յանձնել աշակերտներին բոլոր հնչիւնների հետ ծանօթացնելուց յետոյ։

Թէ այս գրքոյկը որքան յաջող է կազմուած և որքան օգտակար կարող է լինել այդ նպատակի համար՝ այդ թողնում եմ որոշելու հայ ուսուցիչներին։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Յ հնչիւնը, երբ գտնուում է երկու ձայնաւորի մէջ, միշտ միանում է վերջին ձայնաւորի՝ ե, է, ի, ու, ո, ա-ի հետ և կազմում է՝ յե, յի, յէ, յու, յո, յա երկբարբառները, որոնք բառի մէջը կարդացուում են այսպէս.

Օրինակ	գրւում է	կարդացւում է
ա. նա-յե-ցի	յե	ե
բ. կը նա-յէ	յէ	ե
գ. նա-յիր	յի	ի
դ. նա-յում է	յու	իւ
ե. նա-յող	յո	եօ
զ. նա-յած	յա	եա

Ա

Բառի մէջ յե կարդացւում է ե

Նայեցի, ծառայեցին, հրամայեց, խնայեցիք, ընծայեցիր։

Մեր ուսումնարանում սովորող աշակերտները հայեր են։ Սեդրակը գրում է հայերէն դասը։ Նոյեմբեր ամիսն ունի երեսուն օր։ Ուսուցիչը նայելու է այսօր մեր տետրակները։ Մինասը չորս տարի ծառայեց արհեստաւորի մօտ։ Ծնողները Գեղամին ընծայեցին նոր խաղալիք։ Պեա-

բոսն ու Մկրտիչը ճիշտը վկայեցին։ Գիւղացիք խնայեցին իրանց եղներին։

Բ

Բառի մէջը յէ կարդացւում է ե

Կընայէ, կընայէին, կըծառայէր, կըխնայէք, ընծայէք, կըվկաւէր, կըշոյէք։ Ուսուցիչը պէտք է այսօր նայէր մեր տետրակները։ Ռափայէլն ու Միքայէլը գնացին ուսումնարան։ Պետրոսի ազգը Իսրայէլեանց է։ Աշխատանքի մի մասը պէտք է խնայէք սև օրուայ համար։ Դուք ճիշտ կըվկայէք ուսուցչի մօտ։ Արամը պէտք է ծառայէր արհեստաւորի մօտ։ Հայրը կ'ընծայէ Գեղամին նոր խաղալիք։

Գ

Բառի մէջը յի կարդացւում է ի

Դուք վաղ պէտք է գնայիք ուսումնարան։ Ես բան կը տայի Մանուկին իմ գիրքը։ Ամառը դու պէտք է մնայիր գիւղումը։ Այսօր մենք պէտք է գնայինք ման գալու։ Գեղամը գրիչներն առաւ հայի խանութից։ Նոյեմբերն աշնանային ամիս է։ Աշունն այս տարի անձրևային էր։ Մայիս ամիսն ունի երեսուն և մէկ օր։ Ծառային ուղարկեցին հայրենիք։

Դ

Բառի մէջ յու կարդացւում է իւ

Ես նայում եմ, դու ծառայում ես, նրանք խնայում են, դուք ընծայում էք, նրանք վկայում են, դու շոյում ես։ Ուսուցիչը հրամայում

է աշակերտներին։ Սիսակի պայուսակը հին է։ Կատուն նայում է ծտին։ Ներկայումս մեր գիւղումը մի ուսումնարան կայ։ Հայրը շոյում է փոքրիկ Գալուստին։

Ե

Բառի մէջը յո կարդացւում է ե օ

Նայող, ծառայող հրամայող, ընծայող, շոյող, խնայող։ Ուսուցչի հարցերին աշակերտները պատասխանում էին՝ այո կամ ոչ։ Նիկողայոսն առաւ հայոց լեզուի դասագիրք։ Ծառայողները գնացին աշխատելու։ Մեր գիւղումը տղայոց ուսումնարան կայ։ Բագրատն ու Գուրգէնը խնայող աշակերտներ են։ Կատուն սիւնի վրայով փախաւ կտուրը։ Գիւղացին իրան երկու տղայովը գնաց արտը հնձելու։

Զ

Բառի մէջը յա կարդացւում է եա

Նայած, խնայած, ընծայած, վկայած, հրամայած։ Առարկայի անունը գոյական է։ Մինասի ընծայած կակաչները փուչ էին։ Սմբատն իրան խնայած փողերով տետրակներ առաւ։ Աշակերտները գնացին երկաթուղու կայարանը տեսնելու։ Ջմեռը ջրից սառուց է գոյանում։ Բացակայող աշակերտները ներկայացան ուսուցչին։ Աւարտող աշակերտներին վկայականներ տուեցին։ Քաղաքում հոյակապ տներ շատ կան։ Գայիանէն կարում է Կարապետի պայուսակը։ Մեր գիւղը հայաբնակ է։ Հայաստանում հայեր շատ կան։

ս հնչիւնը տ, պ եւ կ հնչիւններից առաջ կարդացւում է ըս

Նրա անունն Ստեփաննոս է։ Գարեգինը նամակ ստացաւ հօրից։ Այս նշանը (,) կոչւում է ստորակէտ։ Կովի ստամոքսը մեծ է։ Գայիանէն լուանում է կովի ստինքները։ Արշակն ստուգում է իրան տետրակները։ Մեր դասերն սկսւում են ժամը ութին։ Եկեղեցու սկիհը նոր է։ Սկզբում մենք չէինք կարողանում արագ գրել։ Գարեգինը փողոցում առաւ սպունգ։ Բամբակն սպիտակ է։ Աշակերտները դասատանը սպասում են ուսուցչին։ Հովիւն սպանեց գայլին։

զ հնչիւնը գ հնչիւնից առաջ միշտ կարդացւում է ըզ

Մինասն ունի նոր զգեստներ։ Մենք ունենք հինգ զգայարանք։ Սեղրակն զգոյշ տղայ է։ Սոխակն իրան ձայնովն զմայլում է լսողին։ Ճաշից յետոյ բոլոր աշակերտները գնացին զբօսնելու։ Դասատանը մենք զբաղւում ենք մի քանի ժամ։

շ հնչիւնը կարդացւում է ըշ

Աշակերտներն շտապում էին ուսումնարան։ Մշակներն շտապ-շտապ գնացին աշխատելու։ Գիւղացիք ցորենը պահում են շտեմարանում։

Ծանօթ. Բացառութիւն են կազմում՝ ստեր, սխալ, ստախօս, սպրդել, թանէսպաս, սփոռց բառերը։

ը, զ, դ, ձ, ղ եւ ջ հնչիւնները շատ բառերի մէջ իրանց ձայնը փոխում են։ Այս հնչիւնները

ը՝ն իրանց ձայնը փոխում են միայն բառի մէջը եւ վերջը եւ կարդացւում են այսպէս՝

բ	կարդացւում է	փ	և	պ
գ	»	ք	»	կ
դ	»	թ	»	տ
ձ	»	ց	»	»
ղ	»	խ	»	»
ջ	»	չ	»	ճ

ը հնչիւնը կարդացւում է փ, երբ բառը վերջանում է՝

Ա. ամբ և եամբ. օրինակ՝ անձամբ, մասամբ, հեշտութեամբ, ուրախութեամբ, բարութեամբ, աշխատութեամբ և այլն։

Բ. Մի քանի բառերում, որոնք բ-ից առաջ ը ունեն. օրինակ՝ երբ, որբ, երբեմն, երբէք, իբրև, սուրբ, նուրբ։

Գ. Երբ բառը վերջանում է՝ որ. Յակոբ, Յոբ, Մեսրոբ, Սերոբ, Քերոբ։

Շաբաթն ունի եօթն օր։ Ուրբաթ ու շաբաթ տօներ էին։ Սուրբ Մեսրոբը գտաւ հայոց տառերը։ Երեխաները եկեղեցում համբուրեցին սուրբ խաչն ու աւետարանը։ Մենք սովորում ենք սրբազան պատմութիւն։ Մինասը համբերող տղայ է։ Բաբկէնն ու Գաբրիէլը մտերիմ ընկերներ են։ Հարբեցողները շուտ են հիւանդանում։ Գուրգէնն առաւ իրան համար այբբենարան։ Դարբինը դարբնոցում նալներ է շինում։ Խաբողը խաբեբայ է կոչւում։ Խաբելը ծանր յանցանք է։ Ոբրուհին սրբեց կալը։

ը հնչիւնը ղ-ից յետոյ կարդացւում է ա
ղ հնչիւնն էլ ը-ից առաջ կարդացւում է խ

Նախշունը գնաց աղբիւրից ջուր բերելու։
Ծնողները ողբում են իրենց ծոյլ զաւակների սև օրը։
Գուրգէնն ու Գագիկը եղբայրներ են։
Վահանն անասունների աղբը կրեց բաղը։

գ հնչիւնը կարդացւում է ք

Ա. օ հնչիւնից յետոյ՝ օգուտ, օգնել, օգոստոս, օգտակար.

Բ. ձ. հնչիւնից յետոյ՝ ձգել, ձգձգել, ձրգտել։

Գ. Հետևեալ միավանկ բառերում՝ ձիգ, ճիգ, էգ, ձագ, սուգ, մուգ, զոյգ, նժոյգ...

Դ. Հետևեալ երկավանկ բառերում՝ կարագ, մարագ, ուրագ, հոգի, ոգի, էգուց...

Ե. Հետևեալ բառերի մէջը, որտեղ գ-ից առաջ ը կայ՝ Սարգիս, Գէորգ, Գրիգոր, Մարգար, Մարգարիտ, մարգարէ, արգելք, պարգև, կարգ։

Զ. Թագաւոր, Թագուհի, նորոգել, ոգևորել, հոգևոր, հագնել, Թագուն։

Մշակի հագուստը հին է։ Յակոբը հագաւ իւր մուգ խալաթը։ Աշակերտները կարգով մտան դասատուն։ Գոմէշը կթւում է օրը երկու անգամ։ Թագուհին կապեց գոգնոցը։ Երեխան նըստած մօր գոգումը ծիծ էր ուտում։ Գիւղացին մի զոյգ եզով կալ էր կասում։ Քերոբն ու Սերոբը երգեր էին երգում։ Աւագ սարկաւագը մեր կրօնաւոյցն է։ Երեխաները անհոգ են։ Ծնողները հոգս են քաշում երեխաների հագնելի-

քի, ապրուստի և ուսման մասին։ Յոգնած ժամանակ սառը ջուր չպէտք է խմել։ Երբ միևնոյն առարկայից շատ կայ՝ կոչւում է յոգնակի։

գ հնչիւնը կարդացւում է կ
Ագռաւը վայրենի թռչուն է։

ղ հնչիւնը կարդացւում է թ

Ա. Երբ բառն սկսւում է ընդ նախադրութեամբ. օրինակ՝ ընդհանուր, ընդունակ, ընդունել, ընդդէմ։

Բ. Երբ բառը վերջանում է որդ. օրինակ՝ որդ, որսորդ, օրիորդ, երկրորդ, երրորդ... նախորդ, քառորդ, ճանապարհորդ, տասանորդ...

Գ. Երբ բառը վերջանում է արդ՝ մարդ, վարդ, ջարդ, զարդ, նաւասարդ, երիտասարդ, բարդ, արդ, կախարդ...

Դ. Երբ բառը վերջանում է՝ ուրդ. աճուրդ, խառնուրդ, խորհուրդ, ժողովուրդ, բուրդ։

Ձին ընտանի կենդանի է։ Ձեռներն ու ոտները մարմնի անդամներն են։ Վարդանն արդէն կարողանում է կարդալ ու գրել։ Հայր Աբրահամն արդար մարդ էր։ Մեր հարևանն ունի երեք որդի։ Մինասի հօր անունն Ադամ է։ Մեր պարտէզումը շատ դդումներ կան։ Թադէոսը, Բարդուղիմէոսը, Վրդանէսը և Տրդատը եղբայրներ են։ Ամառը յորդ անձրևներ են գալիս։ Երիտասարդները յորդորեցին գիւղացիներին, որ գիւղում ուսումնարան բաց անեն։ Առանց օդի ապրել չենք կարող։ Ընտանի կենդանիները լաւ արդիւնք են տալիս։ Այսօր անձրևը շուտ դադարեց։ Վկաները երդուեցին, որ ճիշտը վկայեն։ Զար երեխաները վրդովում են իրանց ծնողներին։ Վարդան վար-

դապետը երեկոյեան քարոզեց ժողովրդին։ Յիսուսը ծնուեց Յուդայի ցեղից։

Ծանօթ. Բացառութիւն կազմում են այս բառերը՝ յարդ, սարդ, խլուրդ, դարդ։

ղ կարդացւում է ա

Ուսուցիչը մեզ այդպէս է պատուիրել։ Գիրքդ ու մատիդ Վահանի մօտն են։ Գործդ կատարիր, յետոյ խաղա։ Դասդ լաւ սովորիր։ Գրիչներդ ու մատիտներդ մաքուր պահիր։ Այդ գրիչը Պետրոսինն է։

ձ հնչիւնը ը հնչիւնից յետոյ կարդացւում է ց

Որձ, փորձ, փորձանք, հանդերձ, ընդարձակ, համարձակ, յարձակուել, բարձր, բարձ, արձան, դերձակ։

Օձը սողուն է։ Խաչատուրը կարդաց դասը բարձր։ Դերեզմանատանը հին արձաններ կան։ Այսօր մեր դասը դարձեալ նոյնը մնաց։ Համբարձումը մեր դպրոցի հոգաբարձուն է։ Ձայնն անտառում արձագանք է տալիս։ Մկրտիչը բարձեց սայլը։ Արմենակը բարձրացաւ սարի գլուխը։ Մերձ ի մահ հիւանդը լաւացաւ։ Դերձակը կարեց Աշոտի հանդերձները։ Գիւղացին եղներին սայլից արձակեց։ Ամառուայ արձակուրդներին գիւղացի աշակերտները գնում են հայրենիք։ Սիմոնը փորձում էր նոր առած գրիչները։ Շները յարձակուեցին գայլի վրայ։ Այս շաբաթ երկու օր արձակ (ազատ) է։ Յովսէփը հազիւ ազատուեց փորձանքից։

ղ հնչիւնը ը, ղ, թ, ձ, խ, ծ, կ, ա, եւ ց հնչիւնների հետ մի քանի բառերի մէջ կարդացւում է խ

Ողբ, աղբիւր, աղբ, եղբայր, բաղդ, խեղդել, դժբաղդ, գաղթել, յաղթել, մաղթանք, թուղթ, շղթայ, կեղծ, ծաղկել, կեղծաւոր, կեղտ, ուղտ, պղտոր, մղկրտալ, աղտոտ, մաղձ, դեղձ, ատաղձ, իղձ. բղխել, բաղխել, զեղխ, մեղք, աղքատ։

Կատուն խեղդեց հաւի ճուտը։ Գայլն անխիղճ գազան է։ Աղքատ մարդը բաղխում էր հարուստի դուռը։ Համբերութեամբ կարելի է յաղթել ամեն տեսակ արգելքների։ Քաղցած մարդը հաց էր ուտում։ Մեղրը քաղցր է։ Ուղտը խելօք կենդանի է։ Մինասի շորերը կեղտոտ են։ Կեղծաւոր մարդկանց յանդիմանում էր Յիսուսը։ Ծառերը ծաղկում են գարնանը։ Գաղթականները գնացին հայրենիք։

Ջ կարդացւում է չ հետեւեալ բառերի մէջ։

Օրինակ՝ աջ, էջ, իջաւ, արջ, մրջիւն, որջ, վերջ, վերջակէտ, միջակէտ, յաջող, ողջ, առողջ, միջոց, միջատ, եղջերու, եղջիւր, մէջ, մէջք, առաջնորդ, յաջորդ։

Անձրևը թրջեց կալը։ Շունը հաջում էր եզան վրայ։ Այսօր առաջ Մինասը կարդաց դասը։ Մեր առաջին դասը հայերէն էր, իսկ վերջինը՝ թուաբանութիւն։ Ամբողջ օրը զբաղուած էինք այգումը։ Մովսէս մարգարէն առաջնորդում էր հրէաներին Աւետեաց երկիրը։ Ուսուցիչը առաջարկեց մեզ երկու խնդիր։ Այսօր մեր դասերը շուտ վերջացան։ Համազասպը միշտ աջակցում է

հօրը։ Կոփն ունի լայն մէջք։ Գրքի մէջը ոչինչ չպէտք է պահել։ Մեծ դասամիջոցին բոլոր աշակերտները գնացին ժամ։ Հմայեակի միջնակ եղբայրը հիւսն է։ Կակալի միջուկը դառն էր։ Էջմիածինը հիմնել Գրիգոր Լուսաւորիչը։ Քահանան ծածկել էր շուրջառը։ Կրակի պէծից հրդեհ առաջացաւ։ Արայի քրոջ անունը Մարթա է։ Շունը պահպանում է տիրոջ տունը։ Մեր ուսումնարանումը սովորում են մի քանի աղջիկ։ Գաղթականները ողջ և առողջ հասան իրանց հայրենիքը։

Ջ կարդացւում է ճ

Բարսեղը զղջաց իւր արածը։ Հիւանդն առողջացաւ։

Վ Ե Ր Ջ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ըս

Սպանել, սպասել, սպունդ, սպի, սպեղանի, սպիտակ, սպառնալ, սպասել, սպաս, սպասաւոր, ստամոքս, ստանալ, ստեղծել, ստինք, ստնտու, Ստեփաննոս, ստոր, ստորակէտ, ստոյգ, ստորագրել, ստորոտ, ստրուկ, ստիպել, ստուեր, սկիւռ, սկիհ, սկեսուր, սկեսար, սկսել, սկիզբ, սկսնակ, ստահակ, սփոփանք, սթափուել, սքանչելի, ստակ (փող)։

Ըզ

Զգեստ, զգալ, զգայուն, զգացմունք, զզոյշ, զբօսանք, զբաղմունք, զգայարանք, զմայլել։

Ըշ

Շտապել, շտապ-շտապ գնալ, շտեմարան։

Ը կարդացւում է փ

Երբ, երբեմն, իբր, իբրև, երբէք, սուրբ, նուրբ, որբ, Սրբուհի, սրբազան, սրբութիւն, սրբավայր, սրբել, Յակոբ, Սերոբ, Քերոբ, Մեսրոբ, Գաբրիէլ, Բաբկէն, խաբել, խաբեբայ, խաբուսիկ, հարբել, դարբին, արբունք, լիրբ, ջրարբի, արիւնարբու, շաբաթ, ուրբաթ, համբերել, համբուրել, ճամբա, ներբող, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի։

Ը կարդացւում է պ

Ողբ, աղբ, աղբիւր, եղբայր։

Գ կարդացւում է ք

Էգ, մուգ, մոգ, շոգ, սուգ, ճիգ, ձագ, զուգել, կարգ, օգոստոս, օգուտ, օգնել, օգտակար, պարգև, երկրպագել, երգ, կարագ, մարագ, ճըրագ, ճրագու, ուրագ, էգուց, ծագել, հոգի, ոգի, հոգս, հագնել, հագուստ, ճգնաւոր, ճգնել, ձգել, ձգձգել, ձգտել, աւագ, սարկաւագ, պատարագ, նորոգել, ոգևորել, թագաւոր, թագուհի, Բագու, հոգևոր, հոգոց, յոգնել, անգամ, գոգ, գոգնոց, Մարգար, Մարգարիտ, մարգարէ, մագաղաթ, թարգմանել, մարգագետին, Գէորգ, Սարգիս, Գրիգոր, Թագուն, Մագթաղ։

Ղ կարդացւում է թ

Արդ, մարդ, վարդ, ջարդ, զարդ, երիտասարդ, նաւասարդ, կախարդ, թակարդ, արդար, որդի, խնդիր, անդամ, կարդալ, կենդանի, որսորդ որդ, բերդ, խորհուրդ, ժողովուրդ, բարդ, օդ, օդապարիկ, դրդել, դդում, երդուել, վրդովել, ընդունել, ընդունակ, Թադէոս, Բարդուղմիէոս, Վրդանէս, Վարդան, Տրդատ, վարդապետ, Վար-

դավառ, թնդանօդ, վառօդ, բուրդ, աճուրդ, խառնուրդ, տասանորդ, որդեգիր, յորդ, ցուդա, կոկորդ։

ձ կարդացում է ց

Օձ, որձ, որձակ, փորձ, փորձանք, վարձ, արձան, արձակ, ընդարձակ, համարձակ, յարձակուել, դարձեալ, դերձակ, հանդերձ, արձակուրդ, բարձ, բարձր, արևադարձ, յորձանք, բարձել, դերձան, խուրձ։

ղ կարդացում է խ

Աղքատ, մեղք, կեղծ, ծաղկել, կեղծաւոր, յաղթել, գաղթել, թուղթ, մաղթանք, շղթայ, կեղտ, աղտ, ուղտ, մղկտալ, պղտոր, գաղտնիք, դեղձ, դեղձանիկ, գեղձ, ատաղձ, մաղձ, քաղցր, քաղցած, խեղճ, բղխել, բաղխել, զեղխ, զեղծել։

ջ կարդացում է չ

Աջ, էջ, մէջ, մէջք, արջ, մրջիւն, միջակ, միջատ, միջուկ, միջոց, միջնակ, միջնորդ, առաջնորդ, առաջ, միջակէտ, վերջակէտ, վերջ, առաջարկ, մէջտեղ, տիկնոջ, քրոջ, տիրոջ, ընկերոջ, հաջել, թրջել վերջանալ, ողջ, առողջ, էջմիածին, իջնել, զիջել, ամբողջ, միջանկեալ, միջամտել, աջակից, ողջոյն։

ջ կարդացում է ճ

Առողջանալ, զղջալ, գեղջուկ։

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
ԵՐԵՎԱՆ, Ереван
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գինն է 7 կոպեկ։

«Ազգային գրադարան»
NL0246046

C